ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5282-Ա « 29 » հոկտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի Հ.2413-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշման հավելվածի 6-րդ և 10-րդ կետերը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

1. Հաստատել Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական պաշտպանության խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ Երևանի քաղաքապետին կից սոցիալական պաշտպանության խորհրդի անդամները նշանակվում են երկու տարի ժամկետով:

3. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունիսի 28-ի «Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական պաշտպանության խորհրդի անհատական կազմը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2022 թվականի ապրիլի 21-ի հ.1503-Ա որոշումն ուժը կորցրած ճանչելու մասին» հ.2413-Ա որոշումը:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 

Հավելված
Երևանի քաղաքապետի
29.10.2026թ.
հ. 5282-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Խորհրդի նախագահ

Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ

Խորհրդի նախագահի տեղակալ

Լևոն Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի տեղակալ

Խորհրդի քարտուղար

Գևորգ Ղարիբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժ/պ

Խորհրդի անդամներ

Արմենուհի Հովակիմյան	«ՅՈՒՆԻՍԵՖ» Հայաստան միջազգային կազմակերպության սոցիալական քաղաքականության մասնագետ
Մերի Երանոսյան	«ՅՈՒՆԻՍԵՖ» Հայաստան միջազգային կազմակերպության սոցիալական աջակցության փորձագետ
Երվանդ Մխիթարյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ նախագահ
Մովսես Պողոսյան	«Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Նարինե Խաչատրյան	Անհատ փորձագետ
Արտակ Բեգոյան	«Հոգեկան առողջության իրազեկման նախաձեռնություն» ՀԿ նախագահ

Էրիկ Մկրտչյան	«Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ ծրագրերի օգնական
Անուշ Պողոսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն
Անահիտ Մելքումյան	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ շահերի պաշտպանության ազգային խորհրդատու
Սվետլանա Հարությունյան	«Լիարժեք կյանք» ՀԿ սոցիալական աշխատող
Լուսինե Սիմոնյան	«Մանկական զարգացման հիմնադրամ» տնօրեն
Լիլիթ Չիտյան	«Սոցիալական արդարության նորարարություններ» ՀԿ համահիմնադիր և ծրագրերի տնօրեն
Տաթևիկ Աբրահամյան	Անհատ փորձագետ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**